ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«03» դեկտեմբերի 2019 թվականի N:321 ք.Գյումրի

ՀՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պարտականությունները կատարողի 2019 թվականի նոյեմբերի 25-ի N:01/07.1/27413-19 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2019 թվականի դեկտեմբերի 3-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանին 2019 թվականի դեկտեմբերի 4-ին գործուղել քաղաք Երևան՝ «Դաբլթրի Բայ Հիլթոն» հյուրանոցում կայանալիք «Ուսուցիչների՝ ներառող դասավանդման վերապատրաստման և մենթորական կարողությունների զարգացման» ծրագրի փակման հաշվետու միջոցառմանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2019 թվականի դեկտեմբերի 4-ին:
3. Հրայր Կարապետյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության կրթության բաժնի պետ Գևորգ Ղումաշյանին:

4. Հրայր Կարապետյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է